

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ Ինեկոբանկի Նոր-Նորք մ/ճ-ի տանիքի վերանորոգման համար:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 26.09.2024թ. ժ. 17:00
  - Էլեկտրոնային տարբերակով՝ [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը –PROC18092024: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել [procurement@inecobank.am](mailto:procurement@inecobank.am) էլ Հասցեով մինչև 27.09.2024թ ժ.17:00
  - Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով
    - ԳՆՀ կոդը –PROC18092024
    - մասնակցի անվանումը,
    - ներկայացման ամսաթիվը,
    - ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝  
Կոնտակտային անձ՝  
Տեխնիկական հարցերի դեպքում Գնումների բաժին՝ Գևորգ Գասպարյան+374 43002272,  
Պահանջվող ծառայության պահանջների և աշխատանքի բնույթի հետ կապված այլ հարցերի դեպքում Ադմինիստրատիվ բաժին՝ Էդգար Մխիթարյան +374 96008083
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
  - Գնառաջարկ,
  - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն
  - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ)
  - Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը
  - Պետական և հարկային գրանցման փաստաթղթերի վկայականներն ու պատճենները
8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

**ԳՆԱՌԱՋԱՐԿ**  
«Ինեկոբանկ» ՓԲԸ Նոր-Նորք մ/ճ տանիք

Հ/Հ	Անվանումը	Նյութի տեսակը	Ցավալը	Ծառայության մատուցման արժեքը ներքոյալ հարկերը	Ծառայության մատուցման ժամկետ/օր	Երաշխիքային ժամկետ/տարի
1	Տանիքի առկա ծածկի վրա լրացուցիչ շերտերի ապահովում	ջրամեկուսիչ, գոլորշիամեկուսիչ, ջերմամեկուսիչ շերտեր	200քմ			
2	Առկա ջրահեռացման խողովակների փոխարինում	Մետաղաթերթից խողովակ 100մմ տրամաչափի	6կետ*12մ			

Առաջարկում ենք կատարել աշխատանքները \_\_\_\_\_ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար \_\_\_\_\_ դրամ:

\_\_\_\_\_ Մասնակցի/կազմակերպության անվանումը

\_\_\_\_\_ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ 2024թ  
Կ.Կ